Արձանագրություն N 2
«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Արսեն Բաբայան
Հանձնաժողովի անդամներ	Վահան Վահանյան, Արթուր Գևորգյան, Հովհաննես Դոմունյան
Հանձնաժողովի քարտուղար	Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 06.10.2025թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի հոկտեմբերի 22-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 10:00-ին: 2025 թվականի հոկտեմբերի 24-ին ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	*Մասնակցի անվանում*	*Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե*	*Կազմակերպության ՀՎՀՀ*
1	*«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ*	*Ք. Երևան, Ազատության 26/8, 011 87 87 17, lawyer@c-e.am*	*01210095*
2	*«Լաբտեխգրուպ» ՍՊԸ*	*Ք. Երևան, Հ.Ներսիսյան 10-3/2, 091 41 80 71, labtechgroup@yandex.ru*	*00261009*
3	*Zhejiang Science And Technology Co. Ltd*		

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ 16.10.2025թ ստացվել են հարցումներ, որին 20.16.2025թ Համակարգով տրամադրվել են պարզաբանումներ (ներկայացվում են ստորև).

Հարցադրում N 1

Հարգելի՝ գնահատող հանձնաժողով «Գնումների մասին» օրենքի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նշված բնութագրերը պետք է նաև ապահովեն հավասար մրցակցային պայմաններ և չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաև լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Քանի որ մեր ընկերությունը շինարարական ընկերություն չէ, ապանոնտաժում և մոնտաժում այլ հարակից շիինարարական միջամտությունների չի կատարում , դիմելու է այլ ընկերությանը որը պետք է ապահովի սարքի անցման ճանապարհի ապանոնտաժում և մոնտաժում, ճշգրիտ գին հաշվարկելու նպատակով, Խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխություն և տրամադրել՝ շենքի հատակագիծը , առաստաղի բարձրությունը , սկզբնական մուտքի երկրաչափական չափերը , այն ճանապարը որով անցնելու է սարքը, եթե առկա է այլ

դռներ կամ չի բավարարելու առաստաղի բարձրությունը մանրակրկիտ նկարագրեք որպեզի բոլոր մասնակիցների համար պարզ լինի կատարվող աշխատանքների բնութագիրը:

Պարզաբանում N 1

Հարգելի գործընկեր,

Սարքավորումը տեղադրման հասցնելու ճանապարհին առկա է թվով 3 դուռ համապատասխանաբար 232x128, 200x123 և 200x143 սմ բացվածքներով: Առաստաղի նվազագույն բարձրությունը կազմում է 282 սմ:

Հարցադրում N 2

Հարգելի Գործընկեր,

Խնդրում եմ տրամադրել պարզաբանում 2-րդ չափաբաժնի մասով: Արդյո՞ք նշված տեխիկական բնութագրին համապատասխան գոյություն ունեն մեկից ավել արտադրողներ և մոդելներ որոք համապատասխանում են ձեր պահաջերին, եթե գոյություն ունի "COMECER" BBST-PC մոդելի պաշտպանիչ մեկուսիչ ռադիոֆարմացիոն դոզավորման համար, այլ սարք կամ սարքեր որը ձեր կողմից սահմանված տեխիկական բնութագերի շեղման միջակայքերում համապատասխանում է, խդրում ենք նշել առվազն մեկ այլ ըկերություն որը բավարարում է ձեր կողմից հայտարարված մրցույթի տեխիկական բնութագրին:

Պարզաբանում N 2

Հարգելի գործընկեր Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գնման առարկա հանդիսացող «Պաշտպանիչ մեկուսիչ ռադիոֆարմացիոն դոզավորման համար» սարքավորումը ձեռք է բերվում բժշկական կենտրոնում արդեն իսկ առկա "COMECER" BBST-PC և "COMECER" BBS-SY մոդելի սարքավորումների հետ համատեղ և փոխկապակցված աշխատելու համար: Արդեն իսկ առկա սարքավորումների տեխնիկական փաստաթղթերում բացակայում է տեղեկատվությունը այն մասին թե այլ արտադրողների կողմից արտադրված ինչ մոդելի սարքավորումների հետ դրանք կարող են համակացված աշխատել, ուստի հնարավոր չէ նշել "COMECER" BBST-PC- ին համարժեք այլ արտադրողի կողմից արտադրվող սարքավորման կոնկրետ մոդել: Տարակերպ մեկնաբանությունները բացառելու նպատակով հրավերում ներառվել է «Սարքավորումը պետք է համատեղելի լինի "Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն" ՓԲԸ-ում (Երևան, Հալաբյան փող., 38/7 շենք) տեղադրված "COMECER" BBST-PC և "COMECER" BBS-SY մոդելի սարքավորումների հետ (կատարվելու է համալրում)» արտահայտությունը՝ որով նկարագրվել է համարժեք հանդիսանալու պայմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես,

- *«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ*

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես, 1-ին չափաբաժնով տեխնիկական

բնութագրում տեղ են գտել երկիմաստ «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» արտահայտություններ, 2-րդ չափաբաժնով ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև տեխնիկական բնութագիրը ներկայացված է հրավերով սահմանված բնութագրի նվազագույն պայմանների պատճենմամբ, առանց հստակեցնելու առաջարկվող ապրանքի բնութագրերը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես շտկել և ներկայացնել 1-ին և 2-րդ չափաբաժիններով Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագիրը)՝ տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր «լրացուցիչ պահանջներ» բաժնի մեջ պահանջվող արտադրողի հավաստումները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը, ինչպես նաև 1-ին չափաբաժնով առաջարկած ապրանքի համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

30.10.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և համակարգով ծանուցել մասնակցին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացրել է շտկման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

17.11.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Բաբայան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 23.10.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են ստորև.

Հ/հ	գնման առարկայի անվանումը	քանակը	Գնման գինը	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները						կարգավիճակը
					Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			
					առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր	առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր	
1	Բարձրաարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆ	1	85,000,000	«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ	70833000	20%	84999600	57,250,000	20%	68,700,000	
				«Լաբտեխգրուպ» ՍՊԸ	69600440	20%	83520528	64,031,970	20%	76,838,364	
				Zhejiang Science And Technology Co. Ltd	81000000	20%	97200000	81,000,000	20%	97,200,000	Մերժված
2	Պաշտպանիչ մեկուսիչ ռադիոֆարմացիոն դոզավորման համար	1	365,000,000	«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ	304165000	20%	364998000	304165000	20%	364,998,000	
				Zhejiang Science And Technology Co. Ltd	320000000	20%	384000000	320000000	20%	384,000,000	Մերժված

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Բաբայան)

17.11.2025թ.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, կնքել պայմանագիր՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ ի հետ 433 698 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ա. Բաբայան*

անդամներ՝ _____ *Վ. Վահանյան*

_____ *Ա. Գևորգյան*

_____ *Հ. Դոմունյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*